



Մ. ՅԱԿՈԲԻ

Ն Ե Ր Ս Է Ն

* Կիր. 1 Փետր.— Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ: Ժամարարն էր Հոգշ. Տ. Ժիրայր Վրդ. Թաշճեան, որ քարոզեց՝ խօսելով քրիստոնէական հաւատքի և պարտաճանաչութեան զգացումին վրայ:

* Եր. 7 Փետր.— Ս. Հայրապետացն Աթանասի և Կիրողի: Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Գլխադրի մատուռին մէջ: Ժամարարն էր Հոգշ. Տ. Սևան Վրդ. Ղարիպեան:

* Կիր. 8 Փետր.— Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Յարութեան Տաճարի մեր վերնատան մատուռին մէջ: Ժամարարն էր Հոգշ. Տ. Սևան Վրդ. Ղարիպեան:

* Եր. 14 Փետր.— Ս. Գրիգորի Աստուածաբանին: Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Գլխադրի մատուռին մէջ: Ժամարարն էր Հոգշ. Տ. Թուրքն Արդ. Յովակիմեան:

* Կիր. 15 Փետր.— Բարեկենդան Առաջաւորի պահոց: Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ: Ժամարարն էր Հոգշ. Տ. Գեղարդ Արդ. Տաւուշարեան:

— Նոր Երուսաղէմի Ս. Գրիգոր Լուսատրիչ եկեղեցիին մէջ ևս Ս. Պատարագ մատուցուեցաւ: Ժամարարն էր Հոգշ. Տ. Ասպետ Արդ. Պալեան:

* Որ. 20 Փետր.— Յիշատակ Յովնանու մարգարէին: Առաջօրուն, Մայր Տաճարին մէջ կատարուեցաւ ընթերցումը Յովնանու Մարգարէութեան Գրքին:

— Ս. Սարգիսի ճախատօնակին ի Ս. Յակոբ ճախագահեց Լուսարարապետ Գերշ. Տ. Հայրիկ Արքեպս. Ապանեան:

* Եր. 21 Փետր.— Ս. Սարգսի Զօրավարին: Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի Ս. Սարգիսի հնադարեան մատուռին մէջ: Ժամարարն էր Հոգշ. Տ. Ասպետ Արդ. Պալեան: Ս. Պատարագէն ետք, ընկալեալ տոբորութեան համաձայն, կատարուեցաւ հոգեհանգստեան պաշտօն՝ հանգուցեալ մեծանուն բարերար Գաղուստ Կիլիպէնկեանի հօր՝ Սարգիսի հոգւոյն համար:

* Կիր. 22 Փետր.— Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Յարութեան Տաճարի վերնատան մեր մատուռին մէջ: Ժամարարն էր Հոգշ. Տ. Սևան Վրդ. Ղարիպեան:

* Եշ. 26 Փետր.— Տեսնենդառաջի մեծահանդէս ճախատօնակին և անոր յաջորդող «Անդատան»-ին և մոմափառութեան արարողութիւններուն ճախագահեց Գերշ. Տ. Ծահէ Արքեպս. Աճէմեան:

— Իրիկնադէմին, Մայր Տաճարին մէջ պաշտուած «Եկեցե՛ք»ի և Հակման կարգերուն նախագահեց Հոգշ. Տ. Կիւրեղ Մ. Վրդ. Գաբրիէան:

— Գիշերը, հակառակ անընդհատ տեղացող անձրևին և փոթորիկին, Ժառանգատրաց Վարժարանի դաշտին վրայ կը վառէր Տեառնընդառաջի աւանդական կրակը:

* Որ. 27 Փետր.— Տեառնընդառաջ: Օրուան հանդիսատր Ս. Պատարագը Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ մատուց Գերշ. Տ. Ծափէ Արքեպս. Աճեմեան:

* Ըր. 28 Փետր.— Իսահակալ Պարթևի հալլապետին: Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Գլխադրի մատուռին մէջ: Ժամարարն էր Հոգշ. Տ. Հայկասեր Վրդ. Պայրամեան:

* Կիր. 29 Փետր.— Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Յակոբեանց Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ: Ժամարարն էր Հոգշ. Տ. Գեղարդ Արդ. Տաւուդարեան:

* Դշ. 3 Մարտ.— Վարդանանց հանդիսատր նախատօնակին ի Ս. Յակոբ նախագահեց Ամեն. Պատրիարք Ս. Հայրը:

* Եշ. 4 Մարտ.— Ս. Վարդանանց զօրավարացն մերոց 1038 վկայիցն (Յիշատակ մեռելոց և տօն ազգային): Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ պատարագեց, ըստ սովորութեան, Ժառնգ. Վարժարանի և Ընծայարանի Փոխ-Տեսուչը՝ Հոգշ. Տ. Նորհան Վրդ. Մանուկեան (այս տօնը Ս. Աթոռիս մէջ ճանչցուած է որպէս տօնը Ժառանգատր սաներուն): Հոգշ. Հայրը քարոզեց, Վարդանանց ոգորումէն քարոյական դասեր հանելով ներկայ սերունդին և Ժառանգատր սաներուն: Քարոզէն ետք, Գերշ. Տ. Ծափէ Արքեպս. Աճեմեանի նախագահութեամբ կատարուեցաւ «Հալլապետական Մաղթանք»՝ Ն. Ս. Օ. Ամենայն Հայոց Տ. Ս. Վազգէն Ա. Կաթողիկոսի անունն տօնին առիթով, իսկ Ս. Պատարագէն ետք՝ հոգեհանգստեան պաշտօն՝ նախագահութեամբ Հոգշ. Տ. Հայկասեր Վրդ. Պայրամեանի:

* Որ. 5 Մարտ.— Իրաւական սովորութեան համաձայն, Ս. Պատարագ մատուցուեցաւ Ասորիներու Ս. Մարկոս Անտարանիչի եկեղեցիին մէջ: Ժամարարն էր Հոգշ. Տ. Նորհան Վրդ. Մանուկեան: Ս. Պատարագէն ետք Միաբանութիւնը պատուասիրուեցաւ Ասորիներու Գերշ. Եպիսկոպոսէն: Երթողորձի թափօրները գլխաւորեց Գերշ. Տ. Ծափէ Արքեպս. Աճեմեան:

* Ըր. 6 Մարտ.— Կ. Պոլսոյ Ս. Ժողովոյն (381): Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Գլխադրի մատուռին մէջ: Ժամարարն էր Հոգշ. Տ. Սեան Վրդ. Հարիպեան:

— Երեկոյեան ժամերգութեան ընթացքին, ըստ սովորութեան, Մայր Տաճարի խորաններն ու գլխատր սրբանկարները վարագորտուեցան:

* Կիր. 7 Մարտ.— Բուն Բարեկենդան: Փակեալ խորանի Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ: Ժամարարն էր Հոգշ. Տ. Հայկասեր Վրդ. Պայրամեան: Դպրապետի պաշտօնը կը վարէր Հոգշ. Տ. Կիւրեղ Մ. Վրդ. Գաբրիէան:

* Դշ. 10 Մարտ.— Սկիզբն կարգաց Մեծի Պահոց: Առաւօտուն, Մայր Տաճարին մէջ պաշտուեցաւ «Արևագայ»ի առաջին ժամերգութիւնը, իսկ կէսօրէ ետք՝ «Խաղաղական» առաջին ժամերգութիւնը:

* Որ. 12 Մարտ.— Նախատօնակը պաշտուեցաւ Ս. Թորոս եկեղեցիին մէջ, որ Զեռագրատունն է Ս. Աթոռիս: Հանդիսապետն էր Զեռագրատան Տեսուչը՝ Գերշ. Տ. Նորայր Արքեպս. Պողարեան:

* Ծր. 13 Մարտ.— Ս. Թեոդորոսի Զօրավարին: Ս. Պատարագը մատուցունցաւ Ս. Թորոս եկեղեցիին մէջ: Ժամարարն էր Հոգշ. Տ. Ասպետ Արդ. Պալեան:

— Կէսօրէ ետք, վաղուան Արտաքսման Կիրակիի առիթով, Լուսարարապետ Գեղշ. Տ. Հայրիկ Արքեպս. Ասլանեանի գլխաւորութեամբ, Միաբանութիւնը «Հրաշափառ»ով մուտք գործեց Ս. Զարութեան Տաճար, ուր պաշտօնեացան երեկոյեան ժամերգութիւնն ու նախատօնակը վերնատան մեր մատուռին մէջ: Ապա կատարուեցաւ Տնօրինական սրբավայրերու այցելութեան հաճդիսաւոր թափօր Տաճարէն ներս: Թափօրապետն էր Հոգշ. Տ. Հայկասեր Վրդ. Պալքամեան:

* Կիր. 14 Մարտ.— Արտաքսման Կիրակի: Գիշերային և առաւօտեան ժամերգութիւնները պաշտօնեացան Ս. Զարութեան Տաճարի վերնատան մեր մատուռին մէջ, ուր և մատուցուեցաւ Ս. Պատարագ: Ժամարարն էր Հոգշ. Տ. Գեղարդ Արդ. Տաւուտլարեան: Ապա կատարուեցաւ երրադարձ մեծահանդէս թափօր՝ Քրիստոսի Ս. Գերեզմանին և Պատանաւորիին շուրջ, գլխաւորութեամբ Լուսարարապետ Գեղշ. Տ. Հայրիկ Արքեպիսկոպոսի: Թափօրականներ կ'երգէին Աղակերպութեան շարականներ:

* Գշ. 16 Մարտ.— Երեկոյեան Ս. Հրեշտակապետաց եկեղեցիին մէջ կատարուեցաւ Մեծ Պահոց «Եկեղեց»ի առաջին արարողութիւնը:

* Եշ. 18 Մարտ.— Իրիկուան Հսկումին ի Ս. Յակոբ նախագահեց և քարոզեց Հոգշ. Տ. Կիրեղ Ծ. Վրդ. Գաբրիէան, բնաբան ունենալով «Այս ազգ ոչ ելանէ բայց միայն պահօք և աղօթիք». բացատրեց Պահքի ծագման ու զարգացման պարագաները, նախաքրիստոնէական շրջանէն մինչև մեր օրերը:

* Ծր. 20 Մարտ.— Ս. Կիրոյի Երուսաղիմայ Հայրապետին: Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի աւանդատան Ս. Կիրոյի սեղանին վրայ, որուն տակ ցոյց կը տրուի այն աւագանը՝ ուր Ս. Կիրեղ Հայրապետ 851 թուին, Ս. Խաչի երևման օրը, բազմաթիւ նորադարձներ մկրտած է: Ժամարարն էր Հոգշ. Տ. Նորհան Վրդ. Մանուկեան:

* Կիր. 21 Մարտ.— Անառակին: Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Հրեշտակապետաց եկեղեցիին մէջ: Ժամարարն էր Հոգշ. Տ. Ասպետ Արդ. Պալեան: Քարոզեց Հոգշ. Տ. Հայկասեր Վրդ. Պալքամեան, խօսելով ճշմարիտ բարեկամութեան մասին և մեկնաբանելով Անառակի անտարանական առակը:

* Գշ. 23 Մարտ.— Իրիկուան Հսկումին ի Ս. Հրեշտակապետ քարոզեց Հոգշ. Տ. Հայկասեր Վրդ. Պալքամեան, խօսելով լեռներու կարևորութեան մասին թէ՛ Հին և թէ՛ Նոր Ռիստերու մէջ: Մատնանշեց Սինա և Թաքոր լեռները, և Գողգոթայի բլուրը՝ ուր կատարուեցան կրօնից պատմութեան գլխաւոր դրոշմագները:

* Եշ. 25 Մարտ.— Իրիկուան Հսկումին ի Ս. Յակոբ նախագահեց Հոգշ. Տ. Հայկասեր Վրդ. Պալքամեան:

* Ծր. 27 Մարտ.— Ս. Յովհաննոս Երուսաղիմայ Հայրապետին: Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի Ս. Գլխադիրի մատուռին մէջ: Ժամարարն էր Հոգշ. Տ. Սևան Վրդ. Ղարիպեան:

* Կիր. 28 Մարտ.— Տնտեսին: Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի Ս. Աստուածածնայ խորանին վրայ: Ժամարարն էր Հոգշ. Տ. Գեղարդ Արդ. Տաւուտլարեան: Քարոզեց Հոգշ. Տ. Կորիւն Ծ. Վրդ. Մանուկեան, մեկնաբանելով Տնտեսի անտարանական առակը:

* Գշ. 30 Մարտ.— Իրիկուան Հսկումին ի Ս. Հրեշտակապետ նախագահեց Հոգշ. Տ. Հայկասեր Վրդ. Պալքամեան: